ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1239-Ա/Ք «15 » 11 2011թ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ (ըստ ճյուղերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ (ըստ ճյուղերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը մեկ

պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2012թ. սեպտեմբերի 1-ից:

3. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը. մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 0606 «Ապահովագրական գործ (ըստ ճյուղերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:
4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/. ապահովել չափորոշչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:
5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված ___
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2011թ. Նոյեմբերի 15 -ի N 1239-Ա/Ք հրամանի

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «Ապահովագրական գործի մասնագետ» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականցվել ուսուցման հետևյալ ձևերով՝

1) առկա,
2) հեռակա,
3) դրսեկության (էքստեռնատ),
4) հեռավար (դիստանցիոն):

3. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով.
   ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի
   բ. հիմնական կրթության հիմքով ՝ 3 տարի
2) կրթության հեռակա ձևով.
   ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի
3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով.

կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2592 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4482 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունք (ներ)՝

1) գործակալների գծով մասնագետ կամ վերահսկող,
2) խիստ հաշվառման փաստաթղթերի հաշվառող,
3) անդերրայթեր (կորպորատիվ և մանրածախ վաճառքների),
4) վերաապահովագրության մասնագետ,
5) հայցը կարգավորող մասնագետ կամ հատուցումների գծով մասնագետ,
6) վնաս գնահատող մասնագետ,
7) մարքեթոլոգ,
8) հաշվապահ,
9) մեթոդաբան:

7. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) Գործակալների ընտրություն, գործակալների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում, պատրաստում, գրանցում, գործակալներին անհրաժեշտ փաստաթղթերով ապահովում, գործակալների ընթացիկ վերահսկողության իրականացում:

2) Խիստ հաշվառման փաստաթղթերի քանակի գնահատում, պատվիրում և ստացում տպարանից, կազմակերպությունում առկա խիստ հաշվառման փաստաթղթերի հաշվառում, գրանցում և պահեստավորում համապատասխան սենյակում, խիստ հաշվառման փաստաթղթերի բաշխում կազմակերպության համապատասխան աշխատակիցներին, գործակալներին, խիստ հաշվառման կնքված, վնասված և անվավեր փաստաթղթերի ընդունում և հաշվառում:

3) Հաճախորդներին ապահովագրության ծրագրերի և պրոդուկտների վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում, ապահովագրության օբյեկտների կամ ապահովագրվող անձանց շրջանակի ուսումնասիրություն և ռիսկայնության գնահատում, գնահատված ռիսկայնության չափանիշների հիման վրա սակագների որոշում պատասխանատու ակտուարի կողմից սահմանված սակագնային միջակայքում, վկայագրերի լրացում, վկայագրերի և դրանց կից փաստաթղթերի տրամադրում ապահովադիրներին և ապահովագրված անձանց:

4) Ապահովագրության տարբեր դասերի ռիսկերի վերաապահովագրություն, վերաապահովագրության պայմանագրերից բխող իրավունքների և պարտականությունների իրականացում, վերաապահովագրության տարեկան ծրագրի մշակում և ներկայացում ղեկավարությանը, վերաապահովագրության գծով ընթացիկ հաշվետվությունների պատրաստում, նոր վերաապահովագրողների որոնում և նրանց հետ համագործակցության կազմակերպում:

5) Ապահովագրական պատահարների վերաբերյալ հայտերի և բողոք-պահանջների ընդունում, ապահովագրական պատահարի դեպքում ժամանում պատահարի վայր, ապահովագրական պատահարի կարգավորում հավաքագրված տեղեկատվության հիման վրա, հատուցման մերժման կամ տրամադրման վերաբերյալ որոշման կայացում, հատուցման վերաբերյալ եզրակացության կազմում:

6) Ապահովագրական պատահարի ընթացքում վնասված օբյեկտի ուսումնասիրություն և ստացված վնասի գնահատում:

7) Ապահովագրական շուկայի ուսումնասիրություն, մասնավորապես՝ ապահովագրական շուկայի մասնակիցների ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրություն, նրանց կողմից առաջարկվող պրոդուկտների, նորամուծությունների և նորարարությունների հետազոտություն, կազմակերպության գովազդային տարեկան և եռամսյակային ծրագրերի և բյուջեի մշակում, ղեկավարության կողմից հաստատված գովազդային ծրագրի իրականացում սահմանված ժամկետում:

8) Կազմակերպության գործունեությունից բխող հաշիվների պատրաստում, ստուգում և շարժի ապահովում, ՀՀ կենտրոնական բանկ և հարկային տեսչություններ ներկայացվող հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

9) Կազմակերպության ներքին կանոնակարգման ակտերի մշակում, ապահովագրության տարբեր դասերի պայմանների միջազգային փորձի ուսումնասիրություն, կազմակերպության

կողմից իրականացվող ապահովագրության տարբեր դասերի պայմանների մշակում և վերանայում

ԳԼՈՒԽ 3.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,
5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,
6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,
7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,
9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,
10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.
0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ

մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտն ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզվով,

4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,

5) ունենա գիտելիքներ ազգային և համաշխարհային պատմության ու մշակույթի վերաբերյալ,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների ու գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության ու միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:

8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն

Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) ՈՒսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. ապահովագրական գործառնությունների կաբինետ,

բ. համակարգչային տեխնիկայի և ուսուցման տեխնիկական միջոցների կաբինետ,

գ) հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների կաբինետ,

դ) օտար լեզուների ուսումնասիրման կաբինետ:

2) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ,

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամ,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է՝ հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը, ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի, նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության «Ապահովագրական գործի մասնագետ» մասնագիտացման մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0606 «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 0606«Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողների անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, դ. շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություն, հաճոյախոսում է, ե. մասնակցում է բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,

	դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ, բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը, է. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-002
Մոդուլի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին բուժօգնության կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը, զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները, գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները, դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը վերավերող պահանջները և նորմերը:
Ուսումնառության արդյունք 4	Առաջին օգնության ցուցաբերում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը, բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը, գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ, դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները, ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-003
Մոդուլի նպատակը	Զարգացնել ուսանողների՝ համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները

	կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scaner, projector, fax, պատճենման սարք և այլն), դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,

	ե. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրում է կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, զ. գծագրում է տեքստային բլոկներ, է. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաներանգավորում:
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, բ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, գ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, դ. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է «համացանց» հասկացությունը, բ. օգտագործում է համացանցային հիմնական ծրագրերը, գ. ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, զ. գրանցվում է էլեկտրոնային փոստում , համացանցային ծրագրերում և այլ կայքերում, է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-001
Մոդուլի նպատակը	Ուսանողներին տալ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, որի արդյունքում ուսանողների մոտ կզարգանան տրամաբանելու, ֆինանսական խնդիրների մոդելավորման տարրական եղանակների, ֆունկցիայի ածանցյալի ու ինտեգրալի և մոտավոր հաշվարկների եղանակների կիրառման հմտությունները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Լուծել գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր և տալ դրանց գրաֆիկական մեկնաբանումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է լուծում գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր, բ. ճիշտ է տալիս գծային և քառակուսային հավասարումները և անհավասարությունները, հավասարումների համակարգերի լուծումների գրաֆիկական մեկնաբանումը:
Ուսումնառության արդյունք 2	Վերլուծել գծային և քառակուսային հավասարումների և անհավասարությունների, հավասարումների համակարգերի լուծումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է վերլուծում գծային և քառակուսային հավասարումների լուծումները, բ. ճիշտ է վերլուծում հավասարումների համակարգի լուծումները:
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաների գումարի բանաձևերը ֆինանսական խնդիրները լուծելիս
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում թվաբանական պրոգրեսիայի օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում, բ. ճիշտ է կատարում երկրաչափական պրոգրեսիայի օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել տոկոսների տեսության էությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը, բ. ճիշտ է պարզաբանում բարդ տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել մոտավոր հաշվարկների եղանակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գծային ինտերպոլյացիայի եղանակը,

	բ. ճիշտ է ներկայացնում գծային ինտերպոլյացիայի եղանակով պարամետրերի և գործակիցների հաշվարկը, գ. ճիշտ է ներկայացնում իտերացիաների եղանակը, դ. ճիշտ է ներկայացնում իտերացիաների եղանակով բարձր աստիճանի հավասարումների լուծումը:
Ուսումնառության արդյունք 6	Կիրառել ֆունկցիայի սահմանի գաղափարը իրական խնդիրներում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի սահմանի սահմանումը և իմաստը, բ. ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի սահմանի հաշվարկների պարզ եղանակները:
Ուսումնառության արդյունք 7	Կարողանալ կիրառել ֆունկցիայի ածանցյալը ֆինանսական խնդիրներում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում ֆունկցիայի ածանցյալի սահմանումը, բ. ճիշտ է կիրառում ֆունկցիայի ածանցյալի երկրաչափական իմաստը, գ. ճիշտ է կիրառում ֆունկցիայի էքստրեմումները՝ մաքսիմումը, մինիմումը և շրջման կետը:
Ուսումնառության արդյունք 8	Կատարել տարրական ֆունկցիաների վերլուծություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի ածանցյալի կիրառումը ֆունկցիաների վերլուծության մեջ, բ. ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի ածանցյալի դերը ֆունկցիայի էության պարզաբանման մեջ, գ. ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի ածանցյալի դերը ֆունկցիաների գծապատկերների կառուցման մեջ:
Ուսումնառության արդյունք 9	Կիրառել ֆունկցիայի ինտեգրալը ֆինանսական խնդիրներում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի ինտեգրալի իմաստը, բ. ճիշտ է ներկայացնում ինտեգրալի կիրառման օրինակները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-002
Մոդուլի նպատակը	Ուսանողների մոտ զարգացնել հաղորդակցման ունակությունները և նպաստել գործարար հաղորդակցման արդյունավետ հմտությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գործարար /գործնական/ հաղորդակցման հմտությունների դերն ու նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման էությունը, բ. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցության ունակությունների ու հմտությունների կարևոր դերը անձի և կազմակերպության մշակույթի, վարկանիշի ձևավորման, գործունեության արդյունավետության ապահովման գործում, գ. ճիշտ է ներկայացնում հաճախորդների հետ հաղորդակցության սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել հաղորդակցումը՝ որպես տեղեկատվական գործընթաց
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման ժամանակ տեղեկությունների հաղորդման և ստացման

	գործընթացի առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցները, նրանց արդյունավետ օգտագործման հիմնական մոտեցումները, գ. ճիշտ է կարողանում օգտագործել մարմնի «շարժումների լեզվի» իմացությունը զրուցակիցների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման և արդյունավետ իրականացման համար, դ. ճիշտ է ներկայացնում ցանկացած ստացված տեղեկություն չորս տեսանկյունից, ե. ճիշտ է պարզաբանում զրուցակցի վիճակը և ցանկությունները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հաղորդակցումը որպես փոխադարձ ընկալում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ընկալման սխալներ առաջացնող գործոնները և արդյունավետ ընկալման հոգեբանական մեխանիզմները, բ. ճիշտ է կարողանում արագ կատարել զրուցակցի դիմագիտական վերլուծությունը և բացահայտել նրա հետ հաղորդակցության կազմակերպման հիմնական ուղղվածությունը:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հաղորդակցումը որպես փոխազդեցություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է վերլուծում հաղորդակցման մասնակիցների դիրքերը և հաղորդակցության փոխադարձ դրությունը, բ. ճիշտ է ներկայացնում «բաց» հաղորդակցության հիմնական առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցության փուլերի հիմնական առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել գործնական հաղորդակցման բարոյական սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև գործնական հաղորդակցման էթիկետը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցության մեջ բարոյական պահվածքի կարևորությունը, բ. ճիշտ է պատկերացնում և ներկայացնում ղեկավարի, ենթակայի, գործընկերոջ բարոյական պահվածքի հիմնական կանոնները, գ. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման էթիկետը և վարքի կուլտուրան, դ. ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցության մեջ հագուստի էթիկետի իմաստն ու նշանակությունը, ե. ճիշտ է ներկայացնում հաճախորդների հետ հեռախոսով արդյունավետ հաղորդակցվելու կանոնները:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել կոնֆլիկտների հոգեբանությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտների էությունն ու կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտների առաջացման պայմանները և զարգացման ընթացքը, գ. ճիշտ է բացահայտում կոնֆլիկտային իրավիճակներում սեփական պահվածքի ոճը, դ. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտների կառավարման եղանակները, ե. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտային իրավիճակներում «պահվածքի կոդեքսը»:
Ուսումնառության արդյունք 7	Վարել բանակցություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանակցությունների էությունը և սկզբունքային կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում բանակցություններին նախապատրաստվելու գործընթացը,

	գ. ճիշտ է ներկայացնում բանակցային ռազմավարությունները և մարտավարությունները, դ. ճիշտ է ներկայացնում բանակցային գործընթացի արդյունավետությունը բարձրացնող հոգեբանական մեխանիզմները, ե. ճիշտ է որոշում բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունների հուսալիությունը:
Ուսումնառության արդյունք 8	Կառավարել ժամանակը և սթրեսները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ժամանակի կառավարման հիմնադրույթները, բ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման մեթոդները, սկզբունքները, մոտեցումները, գ. ճիշտ է ներկայացնում սթրեսի էությունը, առաջացման պատճառները, դ. ճիշտ է ներկայացնում սթրեսի կառավարման հիմնադրույթները և դրանից պաշտպանվելու միջոցառումները, ե. ճիշտ է ներկայացնում հոգեբանական ինքնակարգավորման տեխնիկաները:
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել գործարար հաղորդակցման ունակությունների և հմտությունների ամբողջական նկարագիրը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հաճախորդների հետ հանդիպմանը նախապատրաստվելու գործընթացը, բ. ճիշտ է ներկայացնում հաճախորդների հետ հաղորդակցման ժամանակ գործընկերային հարաբերությունների ստեղծման գործընթացը, գ. ճիշտ է պարզաբանում սեփական կազմակերպությունը և նրա ծառայություններն արդյունավետ ներկայացնելու ու խորհրդատվություն մատուցելու գործընթացը, դ. ճիշտ է ներկայացնում հաճախորդների բողոքներին ճիշտ արձագանքելու գործընթացը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-003
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել տնտեսագիտության տեսության ընդհանուր դրույթներին, հասարակական արտադրության հիմքերին, հասարակական պահանջմունքներին և շահերին, ֆինանսական հարաբերությունների համակարգին, տնտեսական աճին և համաշխարհային տնտեսությանը: Ինչպես նաև տրամադրել ապրանքային արտադրությանն ու փողի էվոլյուցիայի, կապիտալի և դրա կուտակման, դրամական կապիտալի շուկային վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տնտեսագիտության տեսության առարկան, մեթոդները, տնտեսական հարաբերությունների համակարգը, ինչպես նաև տնտեսական կատեգորիաները և տնտեսական օրենքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում տնտեսագիտության տեսության ուսումնասիրության առարկան, խնդիրները, մեթոդները և զարգացման փուլերն ու ուղղությունները,

	բ. ճիշտ է ներկայացնում տնտեսական հարաբերությունների էությունը և դասակարգման տարբեր մոտեցումները, գ. ճիշտ է բացատրում տնտեսական կատեգորիաները, օրենքները և դրանց դասակարգումը:
Ուսումնառության արդյունք 2	Մեկնաբանել հասարակական արտադրության էությունը և կառուցվածքը: Ներկայացնել տնտեսական պահանջմունքները և շահերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հասարակական արտադրության էությունը և կառուցվածքը, բ. ճիշտ է պարզաբանում պահանջմունքների էությունը և կառուցվածքը, գ. ճիշտ է ներկայացնում տնտեսական շահերի էությունը և կառուցվածքը:
Ուսումնառության արդյունք 3	Վերլուծել տնտեսական համակարգը և տնտեսվարման ընդհանուր խնդիրները՝ ի դեմս շուկայական տնտեսական համակարգի:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում տնտեսական համակարգի էությունը և դրա տարատեսակները, բ. ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսակարգը որպես տնտեսական համակարգ և դրա առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և գործունեության սկզբունքները, դ. ճիշտ է պարզաբանում շուկայի հիմնական տարրերը (առաջարկ, պահանջարկ, գին, մրցակցություն):
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ապրանքային արտադրության էությունը և փողի ծագումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ապրանքային արտադրության էությունը և առաջացման պայմանները, բ. ճիշտ է ներկայացնում ապրանքը և նրա հատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում փողի ծագումը, զարգացման փուլերը և գործառույթները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել կապիտալի էությունը, դրա կուտակումը և դրամական կապիտալի շուկան
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում կապիտալի էությունը և տարբեր մեկնաբանությունները, բ. ճիշտ է ներկայացնում կապիտալի շրջապտույտի տնտեսական բովանդակությունը և պտույտի էությունը, գ. ճիշտ է ներկայացնում հիմնական և շրջանառու կապիտալը, հիմնական կապիտալի մաշվածությունը, դ. ճիշտ է պարզաբանում դրամական կապիտալի շուկայի էության և փոխատվական կապիտալի ձևավորման արդյունքները, փոխատվական տոկոսը:
Ուսումնառության արդյունք 6	Բնութագրել աշխատանքի շուկան, աշխատավարձի ձևերն ու համակարգերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում աշխատանքի շուկան և նրա գործունեության մեխանիզմը, բ. ճիշտ է ներկայացնում գործազրկության էությունը և ձևերը: Օուքենի օրենքը, գ. ճիշտ է բնութագրում տարիֆային համակարգը, Լորենցի կորը և Ջինիի գործակիցը:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության էությունը և շուկայական էկոնոմիկայում դրա դերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձեռնարկատիրական գործունեության էությունը և դերը շուկայական էկոնոմիկայում, բ. ճիշտ է պարզաբանում կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը, գ. ճիշտ է բացատրում փոքր բիզնեսի էությունը և դերը շուկայական էկոնոմիկայում:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել հասարակական արդյունքի վերարտադրության էությունը և ազգային հաշիվների համակարգը

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում հասարակական արդյունքի վերարտադրության էությունը, ձևերը և տիպերը, բ. ճիշտ է բնութագրում հասարակական արդյունքի գնահատման մոտեցումները, գ. ճիշտ է բացատրում համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) և համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ազգային հաշիվների համակարգում, դ. ճիշտ է բնութագրում ազգային հաշիվների հիմնական ցուցանիշների հարաբերակցությունը. ՀԱԱ, ՁՆԱ, ազգային եկամուտ, անձնական եկամուտ, տնօրինվող եկամուտ:
Ուսումնառության արդյունք 9	Բնութագրել ֆինանսական համակարգի էությունը և տնտեսական աճի ցիկլային բնույթը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում ֆինանսների ծագումը, էությունը և ֆինանսական համակարգի օղակները, բ. ճիշտ է ներկայացնում պետական բյուջեն՝ որպես ֆինանսական համակարգի հիմնական օղակ, գ. ճիշտ է պարզաբանում արժեզրկման էությունը, պատճառները, տեսակները և հետևանքները, դ. ճիշտ է բնութագրում տնտեսական աճի ցիկլային բնույթը, տնտեսական ճգնաժամի էությունը, թվարկում տեսակները և պատճառները:
Ուսումնառության արդյունք 10	Պարզաբանել համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները և կառուցվածքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում համաշխարհային տնտեսության ձևավորման հիմքերը և կառուցվածքը, բ. ճիշտ է պարզաբանում համաշխարհային առևտուրը և համաշխարհային արժութային հարաբերությունները, գ. ճիշտ է բնութագրում համաշխարհային ինտեգրացիան և գլոբալիզացիան:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՖԻՆԱՆՍՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-004
Մոդուլի նպատակը	Ուսանողներին մատչելի դարձնել ֆինանսական շուկայի նպատակը, խնդիրները և գործառույթները, բացատրել փողի և կապիտալի շուկաները, ծանոթացնել ֆինանսական շուկայի հատվածների, հիմնական մասնակիցների և նրանց գործառույթների հետ, բացատրել ֆինանսական գործիքները, տեղեկացնել ֆինանսական շուկայում ֆինանսական միջոցների շարժի սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել և ներկայացնել ֆինանսական շուկայի նպատակը, խնդիրները և գործառույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ֆինանսական շուկայի էությունը և նպատակը, բ. ճիշտ է բնութագրում ֆինանսական շուկայի խնդիրները և գործունեության անհրաժեշտությունը, գ. ճիշտ է ներկայացնում ֆինանսական շուկայի գործառույթները:
Ուսումնառության արդյունք 2	Սահմանել ու նկարագրել փողի և կապիտալի շուկաները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում փողի շուկան և նրա գործիքները,

	բ. ճիշտ է նկարագրում փողի էությունը և գործառույթները, գ. ճիշտ է բնութագրում կապիտալի շուկան և նրա խնդիրները, դ. ճիշտ է սահմանում կապիտալի շուկայի գործիքները և կիրառման ուղղությունները, ե. ճիշտ է ներկայացնում կապիտալի շուկայի մասնակիցներին:
Ուսումնառության արդյունք 3	Սահմանել ու ներկայացնել ֆինանսական շուկայի հիմնական մասնակիցների դերը և նշանակությունը ֆինանսական համակարգում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆինանսական շուկայի մասնակիցներին և նրանց նպատակը, բ. ճիշտ է բնութագրում բանկերին և նրանց գործառույթները, գ. ճիշտ է սահմանում ապահովագրական ընկերությունների գործունեության ոլորտը և անհրաժեշտությունը, դ. ճիշտ է ներկայացնում արժեթղթերի շուկայի մասնակիցներին և նրանց գործունեության առանձնահատկությունները, ե. ճիշտ է բնութագրում ֆինանսական շուկայի մասնակիցների տեղը և դերը ֆինանսական համակարգում:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ֆինանսական գործիքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆինանսական շուկայի գործիքները և դրանց նպատակը, բ. ճիշտ է բնութագրում արժեթղթերի և արտարժութային շուկայի գործիքների էությունը, գ. ճիշտ է նկարագրում ֆինանսական ածանցյալները և դրանց նպատակը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-005
Մոդուլի նպատակը	Ուսանողներին տալ հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ գիտելիքներ, որի արդյունքում նրանք կտիրապետեն հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև հաշվետվությունների լրացման և վերլուծության հմտություններին:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնորոշել հաշվապահական հաշվառման ընկալումը՝ որպես տեղեկատվական և որոշումների կայացմանը աջակցող համակարգ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման խնդիրներն ու նպատակը, բ. ճիշտ է բնորոշում հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման եւ ընդհանրացման համակարգը, գ. ճիշտ է բնորոշում հաշվապահական հաշվառման տեղեկատվության ներքին և արտաքին օգտագործողներին:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին»
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում օրենքների գործողության ոլորտը,

	բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման կարգավորումը, ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը, գ. ճիշտ է բնութագրում ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները և ներկայացումը, դ. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը, ե. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական խախտումների համար պատասխա-նատվությունը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հաշվապահական հաշվեկշռը և ֆինանսական արդյունքների հաշվետվությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու կապիտալը, բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշռի բաժինները, գ. ճիշտ է մեկնաբանում տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվապահական հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները, դ. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվեկշռի հիմնական ֆունկցիաները:
Ուսումնառության արդյունք 4	Մեկնաբանել հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման գործառույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում կրկնակի գրանցման կարևորագույն գործառույթները հաշվապահական հաշվառման համակարգում, բ. ճիշտ է տարբերակում ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները, գ. ճիշտ է ձևակերպում տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցություններ, դ. ճիշտ է կատարում կրկնակի գրանցում հաշվապահական հաշիվներում, ե. ճիշտ է որոշում հաշվապահական հաշիվների մնացորդները և հաշիվներով կազմում շրջանառության տեղեկագիր:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հաշվապահական հաշիվների հաշվային պլանը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, բ. ճիշտ է տարբերակում հաշվապահական հաշիվները՝ ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի, գ. լ հաշվային պլանից օգտվելու, տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցությունները ձևակերպելու իմացություն, դ. գիտի արտահաշվեկշռային հաշիվների դերը հաշվապահական հաշվառման համակարգում:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել հաշվապահական փաստաթղթերը և գրանցամատյանները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը, բ. ճիշտ է ներկայացնում սկզբնական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները, փաստաթղթերի ժամանակին և ամբողջական ձևակերպումը, հայտնաբերված սխալների ուղղման կարգը, գ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման գրանցամատյանները, դ. ճիշտ է փոխկապակցում փաստաթղթային շրջանառությունը հաշվապահական գրանցամատյանների հետ, ե. ճիշտ է իրականացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ստուգումը և կատարված սխալ գրանցումների

	ուղղումը, զ. փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացման ձևերի իմացություն:
Ուսումնառության արդյունք 7	Կազմել անալիտիկ և սինթետիկ հաշվառման կարգ և հաշվետվություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սինթետիկ և անալիտիկ հաշվառման կարգը, բ. ճիշտ է ըմբռնում սինթետիկ և անալիտիկ հաշվառման տեղեկատվական փոխանցման ուղիները, գ. ճիշտ է ամփոփում անալիտիկ հաշիվների մնացորդները և հանրագումարային արժեքով կարողանում է համադրել համապատասխան սինթետիկ հաշվի մնացորդի հետ, դ. ճիշտ է կարողանում սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագրի հիման վրա կազմել հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների հաշվետվությունը:
Ուսումնառության արդյունք 8	Հիմնավորել ակտիվների և պարտավորությունների գույքագրման անհրաժեշտությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընկալում ակտիվների և պարտավորությունների գույքագրման դրդապատճառները, բ. ճիշտ է ընկալում գույքագրման գործառույթները հաշվապահական հաշվառման տեղեկատվության արժանահավատության գնահատման ոլորտում, գ. ճիշտ է դասակարգում գույքագրման տեսակները և ըմբռնում է գույքագրման հանձնաժողովների ձևավորման սկզբունքները, դ. ճիշտ է ամփոփում գույքագրման արդյունքները և կազմում է գույքագրման «համեմատման տեղեկագրեր», ե. ճիշտ է ձևակերպում գույքագրման արդյունքները՝ հաշվապահական համապատասխան թղթակցություններով:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-006
Մոդուլի նպատակը	Ուսանողներին մատչելի դարձնել ապահովագրության տեսության հիմնական հասկացությունները, ռիսկերի ընդհանուր տեսությունը, ապահովագրության ձևերը և տեսակները, ծանոթացնել ապահովագրական շուկայի հիմնական մասնակիցների և նրանց գործառույթների հետ, բացատրել ապահովագրության խիստ հաշվառման փաստաթղթերը և դրանց լրացման առանձնահատկությունները, ծանոթացնել ապահովագրական ընկերությունների գործունեության կարգավորման գործիքների հետ, ինչպես նաև տեղեկացնել հայցերի կարգավորման և հատուցումների տրամադրման սկզբունքները:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ռիսկերի ընդհանուր տեսությունը, ապահովագրության էությունը և դերը ֆինանսական համակարգում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ռիսկի էությունը, բնութագրիչ մասերը և տեսակները, բ. ճիշտ է ներկայացնում ռիսկերի ապահովագրության սկզբունքները,

	գ. ճիշտ է բնութագրում ռիսկերի կառավարման գործընթացը ապահովագրության ոլորտում, սակագնային քաղաքականությունը, տեխնիկական պահուստները, դ. ճիշտ է սահմանում ռիսկերի խմբավորման գործընթացը և սկզբունքները, ե. ճիշտ է ներկայացնում ապահովագրության էությունը, նպատակը և դերը ֆինանսական համակարգում
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել ապահովագրության հիմնական հասկացությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու հասկացությունների սահմանումները, բ. ճիշտ է բնութագրում ապահովագրական պայմանագիրը և վկայագիրը, դրանց պարտադիր վավերապայմանները, գ. ճիշտ է սահմանում ապահովագրական արժեքը, դ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական սակագնի էությունը և բաղկացուցիչ մասերը, իրականացնում է ապահովագրական սակագնի պարզ բանաձևային հաշվարկ, ե. ճիշտ է ներկայացնում ապահովագրավճարի էությունը, իրականացնում է ապահովագրավճարի պարզ բանաձևային հաշվարկ, զ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական գումարի էությունը, իրականացնում է ապահովագրական գումարի պարզ բանաձևային հաշվարկ, է. ճիշտ է սահմանում չհատուցվող գումարը և նրա տեսակները, ը. ճիշտ է սահմանում ապահովագրական հատուցումը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ապահովագրության ձևերը, ապահովագրության տեսակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրության իրականացման ձևերը և դրանց ներդրման սկզբունքները, բ. ճիշտ է բնութագրում պարտադիր ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, գ. ճիշտ է սահմանում ապահովագրության տեսակները և դասերը, դ. ճիշտ է մեկնաբանում կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունների դասակարգման սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ապահովագրական շուկայի մասնակիցներին, ապահովագրական տիպային ընկերության կառուցվածքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրական շուկայի մասնակիցներին և նրանց դերը շուկայում, բ. ճիշտ է բնութագրում ապահովագրական միջնորդներին և նրանց գործունեության առանձնահատկությունները, գ.ճիշտ է սահմանում ապահովագրական միջնորդների գործունեության կարգավորման սկզբունքները, դ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական տիպային ընկերության կառուցվածքը, կառավարման մարմինները և անհրաժեշտ ստորաբաժանումները, ե. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների աշխատակիցներին և նրանց պարտականությունները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ապահովագրության խիստ հաշվառման փաստաթղթերը, ապահովագրական պայմանագիրը և ապահովագրական վկայագիրը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է հավաքագրում ապահովագրական պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը հաճախորդներից, բ. ճիշտ է իրականացնում ապահովագրական պայմանագիր կնքելիս անդերրայթերի գործառույթը, մասնավորապես՝

	պատասխանատու ակտուարի սահմանած միջակայքում որոշում ապահովագրական սակագին՝ հիմնվելով ապահովագրական պայմանագրի ռիսկայնության վրա, գ. ճիշտ է գրանցում ապահովագրական ընկերություն մուտքագրված վկայագրերը, ապահովում դրանց պահպանման համար նախատեսված կարգը, դ. ճիշտ է կարողանում ապահովագրական գործակալներին և այլ պատասխանատու աշխատակիցներին ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգով դուրս գրել և առձեռն հանձնել ապահովագրական վկայագրերը, ե. ճիշտ է կարողանում ընդունել ապահովագրական գործակալներից և պատասխանատու աշխատակիցներից արդեն լրացված կամ անվավեր ճանաչված վկայագրերը, զ. ճիշտ է կարողանում պարբերաբար հաշվառել և վերահսկողություն սահմանել ապահովագրական գործակալներին և պատասխանատու աշխատակիցներին հանձնված ապահովագրական վկայագրերի շարժի և նրանց մոտ առկա վկայագրերի քանակները, է. ճիշտ է կարողանում ապահովագրական պայմանագրեր կնքելիս իրականացնել անդերրայթերի գործառույթ, մասնավորապես՝ ապահովադիրի հետ փոխադարձ պայմանավորվածության արդյունքում որոշել չհատուցվող գումարի կիրառման կամ չկիրառման հարցը, չհատուցվող գումարի նախատեսման դեպքում ճիշտ որոշել դրա տեսակը և մեծությունը:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ապահովագրական ընկերությունների գործունեության կարգավորման նպատակը և գործիքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ապահովագրական ընկերությունների կարգավորման նպատակը և գործիքները, բ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների և դրանց ղեկավարների լիցենզավորման նպատակը, գ. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների գործունեության նկատմամբ սահմանվող նորմատիվները և դրանց տնտեսագիտական նշանակությունը, դ. ճիշտ է նկարագրում տեխնիկական պահուստների սահմանման կարգը և նպատակը, ե. ճիշտ է մեկնաբանում ապահովագրական ընկերությունների կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների կարգը և նպատակը, զ. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների վերահսկող մարմնի՝ ՀՀ կենտրոնական բանկի դերը և գործունեությունը ապահովագրական շուկայում:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել հայցերի կարգավորման և հատուցումների հիմնարար սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է հավաքագրում ապահովագրության տարբեր դասերի գծով պատահարների հայցերի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը, բ. ճիշտ է իրականացնում հավաքագրված տեղեկատվության վերլուծություն և հայցի կարգավորում, գ. ճիշտ է հաշվարկում ապահովագրական հատուցման ենթակա գումարի մեծությունը՝ կախված փաստացի պատճառված վնասի մեծությունից՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով համամասնական հատուցման սկզբունքը:
Ուսումնառության արդյունք 8	Բնութագրել ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է հաշվարկում ապահովագրական ընկերությունների հիմնական ֆինանսական ցուցանիշները,

	բ. ճիշտ է կարողանում իրականացնել ֆինանսական ցուցանիշների հիման վրա վերլուծություն, գ. ճիշտ է կարողանում հաշվարկել ենթաօրենսդրական ակտերի համաձայն ընկերությունում կնքված և գործող պայմանագրերով ապահովագրական պահուստներին ուղղվող գումարների ծավալները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-007
Մոդուլի նպատակը	Ուսանողներին մատչելի դարձնել ապահովագրության տեսակները և դասերը, դրանց դասակարգման սկզբունքները և կարգը, ապահովագրության բոլոր դասերի ենթադասերը և դրանց առանձնահատկությունները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ԱՊԳ-5-11-006
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ապահովագրության տեսակները և դասերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է նկարագրում ապահովագրության տեսակները, բ. ճիշտ է բնութագրում ապահովագրության տեսակների դասակարգման առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել կյանքի ապահովագրությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում կյանքի ապահովագրությունը, դրա էությունը և նպատակը, բ. ճիշտ է նկարագրում կյանքի ապահովագրության դասերը և ենթադասերը, գ. ճիշտ է ներկայացնում կյանքի ապահովագրության հիմնական առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում կյանքի ապահովագրության ներդրման հեռանկարները:
Ուսումնառության արդյունք 3	Բնութագրել ոչ կյանքի ապահովագրությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ոչ կյանքի ապահովագրությունը, դրա էությունը և նպատակը, բ. ճիշտ է նկարագրում ոչ կյանքի ապահովագրության դասերը և ենթադասերը, գ. ճիշտ է ներկայացնում ոչ կյանքի ապահովագրության հիմնական սկզբունքները, դ. ճիշտ է կարողանում տեղեկատվություն տրամադրել հաճախորդներին ոչ կյանքի ապահովագրության դասերի և ենթադասերի վերաբերյալ, ե. ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում ոչ կյանքի ապահովագրության դրսևորման առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել վերաապահովագրության հիմնադրույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում վերաապահովագրության էությունը և նպատակը, նկարագրում ռիսկի փոխանցման գործընթացը, բ. ճիշտ է մեկնաբանում վերաապահովագրավճարի էությունը, գ. ճիշտ է ներկայացնում համամասնական և ոչ համամասնական վերաապահովագրությունների էությունը, սահմանում ռետրոցեսիան,

	դ. ճիշտ է ներկայացնում ասիսթանս կազմակերպությունների և ապահովագրողների փոխհարաբերությունները, ե. ճիշտ է սահմանում վերաապահովագրության ֆակուլտատիվ և օբլիգատորային մեթոդները, զ. ճիշտ է բնութագրում միջազգային ապահովագրական բրոքերային ընկերությունները և նրանց գործունեության ոլորտները, է. ճիշտ է պարզաբանում ֆակուլտատիվ և օբլիգատորային վերաապահովագրությամբ ապահովագրավճարների սեփական պահման չափաբաժնի որոշման և հատուցումների իրականացման կարգը, ը. ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում վերաապահովագրության իրականացման և կազմակերպման գործընթացը և առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել համաապահովագրության հիմնադրույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում համաապահովագրության էությունը և ծագման նախադրյալները, բնութագրում համաապահովագրության պայմանագրի կողմերին, բ. ճիշտ է պարզաբանում համաապահովագրության փուլի իմաստը, հիմնական ապահովագրողի ընտրության սկզբունքը, գ. ճիշտ է ներկայացնում համաապահովագրության ժամանակ հատուցումների վճարման յուրահատկությունը, համամասնական հատուցման էությունը, դ. ճիշտ է պարզաբանում համաապահովագրության ժամանակ սեփական չափաբաժինների ընտրության կարգը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-008
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ներկայացնել մարքեթինգի և մարքեթինգային հետազոտությունների էությունը, կարևորությունը և առանձնահատկությունները ապահովագրական շուկայում նոր հաճախորդներ ներգրավելու, գովազդային գործընթացները ճիշտ կազմակերպելու ուղղությամբ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ԱՊԳ-5-11-006
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ապահովագրական շուկա, ներքին և արտաքին շուկա, մարքեթինգ հասկացությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում ապահովագրական շուկան՝ որպես ֆինանսական փոխհարաբերությունների յուրահատուկ ոլորտ, բ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական շուկայի բոլոր շահագրգիռ մասնակիցներին, գ. ճիշտ է ներկայացնում մրցակցությունը ապահովագրական շուկայում, տալիս ներքին ապահովագրական շուկայի բնորոշումը, դ. ճիշտ է ներկայացնում արտաքին ապահովագրական շուկան՝ որպես ապահովագրական ընկերությունների համագործակցության արդյունք,

	ե. ճիշտ է պարզաբանում ապահովագրական գործում մարքեթինգի էությունը, նպատակը և անհրաժեշտությունը զ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգի նպատակը՝ որպես ապահովագրական ծառայությունների իրացման խթանում պոտենցիալ ապահովադիրների շրջանում:
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել տեղեկատվության հավաքագրման և մարքեթինգային հետազոտության կարևորությունը ապահովագրական ընկերությունների համար
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում տեղեկատվության դերն ու նշանակությունը մարքեթինգում, բ. ճիշտ է ներկայացնում տեղեկատվության տեսակները, առաջնային և երկրորդային տեղեկատվության հավաքագրման մեթոդները, գ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգային հետազոտության խնդիրը, հիմնական նպատակները, հետազոտական մոտեցումները, հետազոտական գործիքները, կապ հաստատելու մեթոդները, ընտրանքի պլանավորումը և հսկողությունը, դ. ճիշտ է իրականացնում ապահովագրական շուկայի ուսումնասիրություն, տարբեր ապահովագրական ընկերությունների կողմից իրականացվող գործառնությունների և մատուցվող ծառայությունների վերլուծություն:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել շուկայի սեգմենտավորումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շուկայի սեգմենտավորման (հատվածավորման) հասկացությունը և չափանիշները, բ. ճիշտ է բնութագրում շուկայի սեգմենտավորման գործընթացը (շուկայի սեգմենտավորում, շուկայի նպատակային սեգմենտի ընտրություն, ապրանքների դիրքավորում շուկայում):
Ուսումնառության արդյունք 4	Բնութագրել գովազդը՝ որպես ապահովագրողի մարքեթինգի կարևոր բաղկացուցիչ մաս
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրական գովազդի հիմնական նպատակները, բ. ճիշտ է բնութագրում գովազդի հիմնական միջոցները՝ թերթեր, ամսագրեր, ռադիո, հեռուստատեսություն, դիդակտիկ միջոցներ՝ (պլակատներ, բուկլետներ), հասարակական տրանսպորտ, փոստային ծառայություններ, էլեկտրոնային հաղորդակցման միջոցներ, նրանց միջև համամասնության ապահովման կարևորությունը, գ. ճիշտ է պարզաբանում գովազդին ներկայացվող հիմնական պահանջները՝ ճշմարտացիություն, կոնկրետություն, հասցեականություն, հաճախականություն:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-009
Մոդուլի նպատակը	Ուսանողներին տալ գիտելիքներ, որի արդյունքում նրանք կկարողանան հաշվարկել, գնահատել և վերլուծել ֆինանսական, մասնավորապես՝ բանկային, ապահովագրական և արժեթղթերով գործառնությունները, կատարել գործարարական առաջարկների և կազմակերպությունների ֆինանսական վիճակի պարզ վերլուծություն:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	«ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՊԳ-5-11-001
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կիրառել մոտավոր հաշվարկները ֆինանսական հաշվարկների և վերլուծության ընթացքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում մոտավոր հաշվարկների գծային ինտերպոլյացիայի եղանակը, բ. ճիշտ է կիրառում մոտավոր հաշվարկների իտերացիաների եղանակը:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ֆինանսական մաթեմատիկայի հիմունքները և տոկոսների տեսությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում և կիրառում տոկոսների տեսության իմացությունը, բ. ճիշտ է կատարում պարզ և բարդ տոկոսադրույքների հաշվարկը, գ. ճիշտ է ներկայացնում հաշվառման (դիսկոնտավորման) տոկոսադրույքները, դ. ճիշտ է կատարում իրական տոկոսադրույքների որոշումը՝ կախված սղաճից և հարկից:
Ուսումնառության արդյունք 3	Վերլուծել և գնահատել դրամական հոսքերը
Կատարման չափանիշներ	ա. պարբերական անդամներով ֆինանսական հոսքերի ռենտաների հետ կապված կարևորագույն մեծությունների հաշվարկներ կատարելու կարողություն, բ. ներհոսող (միջոցների շրջանառությունից) և արտահոսող (ծախսերը, ներդրումները և այլ վճարային պարտավորությունները) գումարները որոշելու կարողություն:
Ուսումնառության արդյունք 4	Կատարել վարկային գործառնությունների հաշվարկներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում անուիտետների հաշվարկը բարդ տոկոսներով, բ. ճիշտ է կատարում երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկներ, գ. ճիշտ է կազմում տարբեր տեսակի վարկերի տարբեր եղանակներով մարման պլանները:
Ուսումնառության արդյունք 5	Լուծել ֆինանսավարկային գործառնությունների հաշվեկշռային հավասարում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում ֆինանսական համարժեքության սկզբունքը, բ. ճիշտ է լուծում հաշվեկշռային հավասարումները, գ. ճիշտ է կատարում ֆինանսական գործառնությունների եկամտաբերության հաշվարկը:
Ուսումնառության արդյունք 6	Իրականացնել ֆինանսական հաշվարկներ՝ սղաճի առկայության դեպքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սղաճի ինդեքսի և աճի հաշվարկները և դրանց կապը ազգային արժույթի արժեզրկման ինդեքսի և աճի հետ, բ. ճիշտ է կատարում ռենտաների հաշվարկները սղաճի առկայության դեպքում, գ. ճիշտ է կատարում եկամտաբերության հաշվարկը սղաճի առկայության դեպքում:
Ուսումնառության արդյունք 7	Գնահատել արժեթղթերը և որոշել շահութաբերությունը
Կատարման չափանիշներ	ա. տարբեր տեսակի արժեթղթերի փոխարժեքների հաշվարկի կատարում, բ. արժեթղթերով գործարքներ կատարելիս ճիշտ կողմնորոշվելու ունակություն՝ ելնելով դրանց գնահատման և շահութաբերության ֆինանսական ցուցանիշներից, բ. արժեթղթերի հիմնական պարամետրերի իմացություն և դրանց գնահատման ցուցանիշների հաշվարկներում օգտագործելու կարողություն,

	գ. ներդրումային ծրագրերի արդյունավետությունը որոշելու և այն անհրաժեշտ հաշվարկներով հիմնավորելու կարողություն:
Ուսումնառության արդյունք 8	Կատարել գործարարական առաջարկների վերլուծություն և հաշվարկներ
Կատարման չափանիշներ	ա. ներդրումային նախագծերի վերլուծության ստատիկ և դինամիկ պարամետրերի իմացություն, բ. ներդրումային ծրագրերի արդյունավետությունը որոշելու և այն անհրաժեշտ հաշվարկներով հիմնավորելու կարողություն:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-010
Մոդուլի նպատակը	Ծանոթացնել ուսանողներին հավանականության տեսության տարրերի, վիճակագրական մեթոդների և հնարքների հետ, որը հնարավորություն կտա նրանց ուսումնասիրվող երևույթը բնութագրող ինֆորմացիան հավաքագրել վիճակագրական դիտարկումների օգնությամբ և մշակել: Ինչպես նաև ուսանողներին ծանոթացնել ամփոփման և խմբավորման արդյունքների աղյուսակների բաշխման շարքերի և գրաֆիկների տեսքով ներկայացմանը՝ հետագայում դրանց վերլուծման և ուսումնասիրվող երևույթի զարգացման օրինաչափությունները բացահայտելու նպատակով:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	«ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՊԳ-5-11-001
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հավանականությունների տեսության տարրերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հավանականության սահմանումը, բ. ճիշտ է ներկայացնում հավանականությունների գումարման և բազմապատկման թեորեմները, գ. ճիշտ է ներկայացնում պատահական մեծության հիմնական բնութագրիչները, դ. ճիշտ է ներկայացնում հավանականությունների բաշխման ֆունկցիաների դերը:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել վիճակագրություն առարկան, մեթոդը և խնդիրները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «Վիճակագրության հիմունքներ» առարկան և նրա դերը հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունների ճանաչողության մեջ, բ. ճիշտ է ներկայացնում քանակական և որակական վերլուծության փոխկապակցությունը վիճակագրության մեջ, գ. ճիշտ է ներկայացնում վիճակագրության մեթոդը և նրա առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում վիճակագրական հետազոտման հիմնական փուլերը, ե.ճիշտ է ներկայացնում վիճակագրության հիմնական ֆունկցիաները և նրա խնդիրները շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել վիճակագրական դիտարկման, խմբավորման և բաշխման շարքերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դիտարկումը՝ որպես վիճակագրական հետազոտության սկզբնական փուլ,

	բ. ճիշտ է ներկայացնում դիտարկման ծրագիրը, օբյեկտը և միավորը, գ. ճիշտ է ներկայացնում վիճակագրական հաշվետվությունների ձևերը, դրանց տեսակները և ներկայացման ժամկետները, դ. ճիշտ է ներկայացնում խմբավորման մեթոդը, ե. ճիշտ է ներկայացնում խմբավորման հատկանիշների տեսակները, խմբերի թվի և խմբավորման միջակայքի որոշումը, զ. ճիշտ է ներկայացնում բաշխման շարքերը, դրանց կառուցումը ըստ որակական և քանակական հատկանիշների, ինչպես նաև գիտի բաշխման շարքերի գրաֆիկները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել բացարձակ և հարաբերական մեծությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բացարձակ մեծությունների տեսակները, չափի միավորները և նշանակությունը վիճակագրական հետազոտություններում, բ. ճիշտ է ներկայացնում հարաբերական մեծությունների նշանակությունը, տեսակները և արտահայտման ձևերը:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել միջին մեծությունները և վարիացիայի ցուցանիշները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում միջին մեծությունների մեթոդը, բ. ճիշտ է ներկայացնում միջինի տեսակները և դրա ընտրության եղանակները, գ. ճիշտ է ներկայացնում ընդհանուր և մասնակի միջինները և դրանց հիմնական մաթեմատիկական հատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում միջին կշիռների նշանակությունը, ե. ճիշտ է ներկայացնում վարիացիայի հիմնական ցուցանիշները և դրանց օգտագործումը:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել դինամիկայի շարքերը և տնտեսական ինդեքսները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դինամիկայի շարքի տարրերն ու տեսակներ, բ. ճիշտ է ներկայացնում շարքի միջին և վերլուծական ցուցանիշները, գ. ճիշտ է ներկայացնում վիճակագրական հետազոտությունների ինդեքսային մեթոդը, դ. ճիշտ է ներկայացնում անհատական, ընդհանուր, ագրեգատային, միջին թվաբանական և ներդաշնակ ինդեքսները, ե. ճիշտ է ներկայացնում կարևորագույն տնտեսական ինդեքսները և նրանց փոխկապակցվածությունը:
Ուսումնառության արդյունք 7	Տիրապետել ընտրանքային դիտարկումներին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ընտրանքային դիտարկումը, բ. ճիշտ է ներկայացնում ընտրանքային դիտարկման տեսակները և սխալները:
Ուսումնառության արդյունք 8	Տիրապետել ֆինանսների ոլորտում, մասնավորապես՝ բանկային գործում և ապահովագրության մեջ վիճակագրության կիրառման օրինակներին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մեծությամբ փոփոխվող ավանդների միջին արժեքի հաշվարկման մեթոդիկան, բ. ճիշտ է ներկայացնում ժամանակի մեջ բաշխված վճարումների միջին կշռված արժեքի հաշվարկը, գ. ճիշտ է ներկայացնում բանկային և ապահովագրական գործառնությունների արդյունքների վարիացիայի հաշվարկը:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ EXCEL ԿԾՓ-ի ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-011
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել ֆինանսաբանկային ոլորտի գործնական խնդիրների մոդելավորման և լուծման մեթոդիկային EXCEL ԿԾՓ-ի միջավայրում:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ» ԱՀ-ՀՕ-5-11-003, «ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՊԳ-5-11-009
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կիրառել EXCEL ԿԾ Փաթեթում ներմուծված ֆինանսական, մաթեմատիկական, վիճակագրական և տրամաբանական կատեգորիաների ֆունկցիաները ֆինանսական խնդիրների մոդելավորման և լուծման գործընթացում և ստեղծել լուծման մինի ծրագրեր:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆինանսական ֆունկցիաների դերը և նշանակությունը ֆինանսական խնդիրների լուծման ընթացքում, բ. ճիշտ է ներկայացնում մաթեմատիկական, վիճակագրական և տրամաբանական կատեգորիաների ֆունկցիաների կիրառման հնարավորությունները ֆինանսական խնդիրների լուծման ընթացքում:
Ուսումնառության արդյունք 2	Կատարել տարրական ֆինանսական հոսքերի հաշվարկներ պարզ և բարդ տոկոսների դեպքում, հաշվարկել էությամբ տարբեր տոկոսադրույքներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում կապիտալի աճեցման օրենքների վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդիկան պարզ և բարդ դրույքների դեպքում, բ. ճիշտ է կատարում կապիտալի դիսկոնտավորման խնդիրների լուծումը EXCEL-ում, գ. ճիշտ է կատարում անվանական, հարաբերական, հավասարեցնող և էֆեկտիվ տոկոսադրույքների հաշվարկները, դ. ճիշտ է կատարում ֆինանսական համարժեքության սկզբունքը և ոչ պարբերական ֆինանսական հոսքերի վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդիկան, ե. ճիշտ է կատարում կարճաժամկետ վարկերի մարման վերաբերյալ խնդիրների լուծումը:
Ուսումնառության արդյունք 3	Կատարել պարբերական ֆինանսական հոսքերի՝ ռենտաների ամփոփիչ բնութագրիչների հաշվարկներ՝ պարզ և բարդ տոկոսադրույքների դեպքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հաստատուն ռենտայի աճեցրած արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում, բ. ճիշտ է ներկայացնում հաստատուն ռենտայի զեղչված արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում, գ. ճիշտ է ներկայացնում հետաձգված հաստատուն ռենտայի ընթացիկ արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում,

	դ. ճիշտ է ներկայացնում փոփոխական ռենտայի աճեցրած արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում:
Ուսումնառության արդյունք 4	Կատարել երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկներ, կազմել տարբեր եղանակներով վարկերի մարման պլաններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում երկարաժամկետ վարկերի դրամահոսքային (անուիտետային) տարբեր եղանակներով մարման խնդիրների լուծման մեթոդիկան, բ. ճիշտ է ներկայացնում հիփոթեքային վարկը, դրա մարումը և մարման պլանի կազմումը, գ. ճիշտ է ներկայացնում սպառողական վարկերի մարման պլանի կազմումը, դ. ճիշտ է ներկայացնում երկարաժամկետ վարկերի մարումը նախօրոք որոշված մեծությամբ դրամահոսքերով, ե. ճիշտ է կատարում վարկի մարման ընթացքում պարտքի մնացորդի հաշվարկը:
Ուսումնառության արդյունք 5	Կատարել ֆինանսավարկային գործառնությունների եկամտաբերության հաշվարկներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում եկամտաբերության հաշվարկը էֆեկտիվ տոկոսադրույքի միջոցով, բ. ճիշտ է կատարում բանկային գործառնությունների եկամտաբերության հաշվարկը, գ. ճիշտ է կատարում ֆինանսական գործարքի եկամտաբերության հաշվարկը, դ. ճիշտ է կատարում եկամտաբերության հաշվարկը շահութահարկի առկայության դեպքում:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ֆինանսավարկային գործառնությունների հաշվարկները սղաճի առկայության դեպքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սղաճի աճի և ինդեքսի կապը ազգային արժույթի արժեզրկման աճի հետ, բ. ճիշտ է ներկայացնում սղաճի պայմաններում ռենտայի ապագա արժեքի հաշվարկները, գ. ճիշտ է ներկայացնում վարկային գործառնությունների հաշվարկները սղաճի առկայության դեպքում, դ. ճիշտ է կատարում եկամտաբերության հաշվարկը սղաճի առկայության դեպքում:
Ուսումնառության արդյունք 7	Կատարել արժեթղթերի փոխարժեքների և եկամտաբերության հաշվարկներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում պարտատոմսերի փոխարժեքի և եկամտաբերության հաշվարկները, բ. ճիշտ է կատարում բաժնետոմսերի հետ կապված հաշվարկները, գ. ճիշտ է կատարում մուրհակների հետ կապված հաշվարկները, դ. ճիշտ է կատարում դյուրացիայի հաշվարկը:
Ուսումնառության արդյունք 8	Վերլուծել և գնահատել ներդրումային և լիզինգային նախագծերի արդյունավետությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում զուտ ընթացիկ արժեքի և եկամտաբերության ներքին դրույքի կիրառումը ներդրումային նախագծերի վերլուծության համար, բ. ճիշտ է ներկայացնում ընթացիկ արժեքի և եկամտաբերության ներքին դրույքի կիրառումը լիզինգային նախագծերի վերլուծության համար:
Ուսումնառության արդյունք 9	Կատարել ֆինանսներում տարբեր մեծությունների միջին արժեքների հաշվարկներ և ներկայացնել այդ հաշվարկների առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում փոփոխական պարզ և բարդ դրույքների միջին արժեքի հաշվառումը,

	բ. ճիշտ է ներկայացնում սղաճի աճի և ազգային արժույթի արժեզրկման աճի միջին արժեքի հաշվարկը, գ. ճիշտ է ներկայացնում մեծությամբ փոփոխվող ավանդների միջին արժեքի հաշվարկը, դ. ճիշտ է ներկայացնում կամայական պահերի կատարված վճարումների միջին ժամկետի հաշվարկը, ե. ճիշտ է ներկայացնում եկամտաբերության միջին արժեքի հաշվարկը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-012
Մոդուլի նպատակը	Ուսանողներին տալ ՀՀ հարկային օրենսդրության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, որի արդյունքում նրանք հնարավորություն կստանան մասնագիտական գործունեություն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԱՊԳ-5-11-003
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հարկային օրենսդրության հիմունքները և սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանվող «Հայաստանի Հանրապետությունում հարկ», «հարկային գործակալ» հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում հարկերի և հարկային արտոնությունների տեսակները, հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները, հարկային վեճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական պահանջների խախտումների համար պատասխանատվությունը, գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հիմքում դրված սկզբունքների էությունը՝ հարկի վճարման կամովիության սկզբունք, հարկադրանքի սկզբունք, հարկային համակարգի կանխատեսելիության սկզբունք, արդարության սկզբունք:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ՀՀ գործող հարկային ռեժիմները և հարկատեսակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ՀՀ-ում գործող հարկման ռեժիմները՝ ընդհանուր հարկման ռեժիմ և հաստատագրված վճարով հարկման ռեժիմ, բ. ճիշտ է ներկայացնում ՀՀ հարկատեսակների՝ շահութահարկի, եկամտահարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի, հողի հարկի էությունը, գ. ճիշտ է ներկայացնում հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, դ. ճիշտ է կիրառում հաստատագրված վճարի դրույքաչափերը, ե. ճիշտ է իրականացնում հաշվառումը սահմանված դրույքաչափերով:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել «Շահութահարկի մասին» օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում շահութահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները,

	բ. ճիշտ է որոշում հարկվող շահույթը, գ. ճիշտ է կիրառում նվազեցումները և դրույքաչափերը, դ. ճիշտ է ներկայացնում արտոնությունները, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հարկման առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում շահութահարկի հաշվարկները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել «Եկամտահարկի մասին» օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում եկամտահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները, բ. ճիշտ է որոշում հարկվող եկամուտը, գ. ճիշտ է կիրառում նվազեցումները և դրույքաչափերը, դ. ճիշտ է ներկայացնում արտոնությունները, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների, անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարկման առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում եկամտահարկի հաշվարկները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ԱԱՀ վճարողներին, հարկվող, չհարկվող և հարկից ազատված գործարքներին, բ. ճիշտ է որոշում հարկվող շրջանառությունը, գ. ճիշտ է կիրառում դրույքաչափերը, դ. ճիշտ է իրականացնում հարկի հաշվեգրումը և հաշվանցումը, ե. ճիշտ է ներկայացնում ԱԱՀ հաշվարկները:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել «Ակցիզային հարկի մասին» օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները և հարկ վճարողներին, բ. ճիշտ է բնութագրում ակցիզային հարկով հարկման օբյեկտը և բազան, գ. ճիշտ է կիրառում դրույքաչափերը և արտոնությունները, դ. ճիշտ է իրականացնում ակցիզային հարկի մասով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը, հարկի հաշվանցումը և վերադարձը, ե. ճիշտ է ներկայացնում ակցիզային հարկի հաշվարկները:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել «Գույքահարկի մասին» օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում գույքահարկ վճարողներին և հարկվող օբյեկտներն ու բազան, բ. ճիշտ է կիրառում դրույքաչափերը և արտոնությունները, գ. ճիշտ է ներկայացնում գույքահարկի հաշվարկները:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել «Հողի հարկի մասին» օրենքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում հողի հարկ վճարողներին և հարկման օբյեկտները, բ. ճիշտ է կիրառում դրույքաչափերը, գ. ճիշտ է ներկայացնում հողի հարկի հաշվարկները:

Ուսումնառության արդյունք 9	Սահմանել և ներկայացնել սոցիալական ու պարտադիր այլ վճարները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում սոցիալական վճարներ կատարողներին և սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտները, բ. ճիշտ է կիրառում դրույքաչափերը, գ. ճիշտ է ներկայացնում սոցիալական, բնապահպանման և բնօգտագործման, ճանապարհային, հանրային ծառայությունների կարգավորման վճարների, պետական տուրքի հաշվարկները, դ. ճիշտ է ներկայացնում անհատ ձեռնարկատիրության մասով սոցիալական վճարների հաշվարկման առանձնահատկությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆԳԼԵՐԵՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-013
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել անգլերեն լեզվով հրատարակվող բանկային, ապահովագրական, տնտեսագիտական գրականությանը և զարգացնել գիտելիքներն ու հմտությունները անգլերենով հաղորդակցվելու, մասնագիտական թարգմանություններ կատարելու ուղղությամբ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Հաղորդակցվել անգլերեն լեզվով՝ ֆինանսական համակարգում կիրառելով ֆինանսական միջազգային հարաբերությունների վերաբերյալ փաստաթղթերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում բանավոր և գրավոր թարգմանությունները, բ. ճիշտ է լրացնում, կազմում ֆինանսական գործառնություններին վերաբերող փաստաթղթերն անգլերեն լեզվով, գ. ճիշտ է հաղորդակցվում ֆինանսական համակարգի հնարավոր հաճախորդների հետ:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ապահովագրության հիմնական հասկացությունները ապահովագրության ձևերը, ապահովագրության տեսակները անգլերեն լեզվով
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու հասկացությունների սահմանումները, բ. ճիշտ է բնութագրում ապահովագրական պայմանագիրը և վկայագիրը, դրանց պարտադիր վավերապայմանները, գ. ճիշտ է սահմանում ապահովագրական արժեքը, դ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական սակագնի էությունը և բաղկացուցիչ մասերը, իրականացնում է ապահովագրական սակագնի պարզ բանաձևային հաշվարկ, ե. ճիշտ է ներկայացնում ապահովագրավճարի էությունը, իրականացնում է ապահովագրավճարի պարզ բանաձևային հաշվարկ, զ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական գումարի էությունը, իրականացնում է ապահովագրական գումարի պարզ բանաձևային հաշվարկ,

	է. ճիշտ է սահմանում չհատուցվող գումարը և նրա տեսակները, ը. ճիշտ է սահմանում ապահովագրական հատուցումը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պահանջված փաստաթղթերն անգլերեն լեզվով և կարողանալ հաճախորդին բացատրել դրանց լրացման կարգը, բնութագրել ապահովագրական ընկերության աշխատանքի սկզբունքները և նրանց ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կարդում և արտասանում ապահովագրական տերմինները, բ. ճիշտ է ներկայացնում տեքստի թարգմանությունը և պատասխանում հարցերին, գ. ճիշտ է լրացնում ապահովագրական նամակների թարգմանչական պահանջները, դ. ճիշտ է կատարում իրեն հետաքրքրող հարցադրումները և ստանում պատասխանները, ե. ճիշտ է ներկայացնում բառակապակցությունները և դրանց երկակի ընկալումը տնտեսագիտական թարգմանության ժամանակ:
Ուսումնառության արդյունք 4	Կատարել տերմինային և ընդհանուր գործածության բառապաշարի թարգմանություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում տրված մոդելները և կազմել ինքնուրույն իրավիճակներ, բ. ճիշտ է ստուգում և ամրապնդել տեքստերի ակտիվ բառապաշարը, գ. ճիշտ է պատկերացնում տերմիններն ու քերականական նյութերը, դ. ճիշտ է բացատրում և զարգացնում բանավոր խոսքը:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել բանկերի ծագումը, էությունը և գործառույթները: Բանկային համակարգը և նրա ձևավորումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանկային գործի ծագման հիմնապատճառները և հետագա զարգացումը, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը, բ. ճիշտ է բնութագրում բանկերի էությունը և ներկայացնել բանկի տնտեսական բովանդակությունը, գ. ճիշտ է ներկայացնում բանկերի դերը տնտեսության զարգացման գործում, դ. ճիշտ է բնութագրում բանկերի առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում բանկի գործառույթները և գործառնությունները, զ. ճիշտ է ներկայացնում բանկային համակարգը մի շարք զարգացած երկրներում և Հայաստանի Հանրապետությունում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-014
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել ապահովագրական ընկերություններում հաշվապահական հաշվառումը վարելու առանձնահատկություններին և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ԱՊԳ-5-11-005, «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԵՐԸ» ԱՊԳ-5-11-007
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաշվապահական հաշվառման հայեցակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերություններում հաշվապահական հաշվառումը կարգավորող և կանոնակարգող նորմատիվ ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում այն որակական պահանջները, որոնք ընկած են ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման և հաշվետվական համակարգի հիմքում, գ. ճիշտ է ներկայացնում տեղեկատվական ռիսկ առաջացնող գործոնների նկարագրությունը և դրանց առանձնակի կարևորումը:
Ուսումնառության արդյունք 2	Համառոտ նկարագրել հաշվապահական հաշվառման ստանդարտների նպատակը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման ստանդարտների սահմանումը, բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում, գ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերություններում կիրառվող հիմնական հաշվապահական հաշվառման ստանդարտները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ապահովագրական ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ տարրերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հաշվեկշիռը իր ակտիվային և պասիվային մասերով, բ. ճիշտ է ներկայացնում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կազմման սկզբունքը, գ. ճիշտ է ներկայացնում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության կազմման սկզբունքները, դ. ճիշտ է ներկայացնում սեփական կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվելիության կազմման սկզբունքը, ե. ճիշտ է ներկայացնում ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրությունը և հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել սպահովագրական ընկերությունների հաշվառման հաշիվների պլանը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման պլանը, բ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների հաշվային պլանի կազմման կառուցվածքը և կազմման սկզբունքները, գ. ճիշտ է դասակարգում ապահովագրական ընկերությունների հաշվային պլանում ակտիվները և պարտավորությունները ըստ խմբերի և ենթախմբերի:
Ուսումնառության արդյունք 5	Նկարագրել հաշվապահական տեղեկատվության ձևավորման գործընթացը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքը, բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման գրքերում ֆինանսական տեղեկատվության գրանցումը, գ. ճիշտ է ներկայացնում վերլուծական և ընդհանրացման հաշվապահական հաշվառման անհրաժեշտությունը, դ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման տեղեկատվության ձևավորման ցիկլը:
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ ապահովագրական գործառնությունների հաշվապահական հաշվումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրավճարների վերլուծական հաշվառումը,

	բ. ճիշտ է կատարում ապահովագրավճարների սինթետիկ հաշվառումը, գ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական հատուցումների վերլուծական հաշվառումը դ. ճիշտ է կատարում ապահովագրական հատուցումների սինթետիկ հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել ապահովագրական գործակալների գործառնությունների հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում ապահովագրական գործակալների կողմից կատարվող գործարքների հաշվառման առանձնահատկությունները, բ. ճիշտ է կատարում ապահովագրական գործակալների կողմից ապահովագրական պայմանագրերի հաշվառումը, գ. ճիշտ է կատարում ապահովագրավճարների հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել ոչ կյանքի ապահովագրության պահուստների հաշվապահական հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ոչ կյանքի ապահովագրության պահուստների հաշվապահական հաշվառման ընդհանուր բնութագիրը, բ. ճիշտ է բնութագրում չվաստակած ապահովագրավճարների պահուստների հաշվապահական հաշվառումը, գ. ճիշտ է ներկայացնում պահանջների պահուստի հաշվապահական հաշվառումը, դ. ճիշտ է բնութագրում պահանջների պահուստի անընդհատ և պարբերաբար հաշվառման մեթոդները, դրանց տարբերությունները:
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել կյանքի ապահովագրության պահուստների հաշվապահական հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կյանքի ապահովագրության պահուստների հաշվապահական հաշվառման ընդհանուր բնութագիրը, բ. ճիշտ է բնութագրում կյանքի ապահովագրության պահուստների հաշվառման մեթոդները, գ. ճիշտ է բնութագրում կյանքի ապահովագրության պահանջների պահուստի անընդհատ և պարբերաբար հաշվառման մեթոդները, դրանց տարբերությունները:
Ուսումնառության արդյունք 10	Ներկայացնել ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների ձևավորումը և հարկային հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների ձևավորման հաշվապահական հաշվառումը, բ. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը, գ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռը, դ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների կողմից վճարվող հարկերը և դրանց հաշվապահական հաշվառումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-015
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ներկայացնել պարտադիր ապահովագրության ընդհանուր տեսությունը, միջազգային փորձը, ինչպես

	նաև Հայաստանում դրա իրականացման փորձը ավտոտրանսպորտային միջոցների պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրինակով և զարգացման հեռանկարները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԵՐԸ» ԱՊԳ-5-11-007
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Պարտադիր ապահովագրության էության, նպատակի և անհրաժեշտության, պարտադիր ապահովագրության տեսակների և ուղղությունների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է նկարագրում պարտադիր ապահովագրության նպատակը, բ. ճիշտ է բնութագրում պարտադիր ապահովագրության տեսակները և յուրաքանչյուրի անհրաժեշտությունը:
Ուսումնառության արդյունք 2	Ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության պարտադիր ապահովագրության՝ ԱՊՊԱ իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ԱՊՊԱ-ի նպատակը և ուղղությունները, բ. ճիշտ է նկարագրում ԱՊՊԱ կարգավորումը, օրենսդրական դաշտը, գ. ճիշտ է բնութագրում ԱՊՊԱ համակարգի մասնակիցներին, նրանց իրավասությունները և պարտականությունները, դ. ճիշտ է ներկայացնում Ավտոապահովագրողների բյուրոյի դերը ԱՊՊԱ համակարգի գործունեության մեջ, ե. ճիշտ է սահմանում պարտադիր ապահովագրության ենթակա ավտոտրանսպորտային միջոցները, զ. ճիշտ է ներկայացնում ԱՊՊԱ շրջանակներում հատուցման ենթակա գույքային և անձնական վնասները, է. ճիշտ է հավաքագրում ԱՊՊԱ պայմանագրի համար անհրաժեշտ փաստաթղթերը, լրացնում ԱՊՊԱ վկայագիրը և կտրոնը, ը. ճիշտ է բացատրում հաճախորդներին համաձայնեցված հայտարարագրի լրացման կարգը և դեպքերը, թ. ճիշտ է նկարագրում ԱՊՊԱ համակարգի գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, տեղեկատվական համակարգը, վնաս գնահատողներին:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել առողջության պարտադիր ապահովագրությունը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է բնութագրում առողջության պարտադիր ապահովագրության նպատակը և անհրաժեշտությունը, բ. ճիշտ է բնութագրում պարտադիր ապահովագրության իրականացման հնարավոր ձևերը, գ. ճիշտ է նկարագրում առողջության պարտադիր ապահովագրության համակարգի մասնակիցներին, դ. ճիշտ է ներկայացնում առողջության պարտադիր ապահովագրության ենթակա անձանց շրջանակը, ե. ճիշտ է նկարագրում առողջության պարտադիր ապահովագրության զարգացման և ներդրման հեռանկարները Հայաստանում:
Ուսումնառության արդյունք 4	Աշխատանքում դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում աշխատանքում դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր

	ապահովագրության նպատակը և անհրաժեշտությունը, բ. ճիշտ է բնութագրում աշխատանքում դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության մասնակիցներին, գ. ճիշտ է նկարագրում գործատուների և պետության դերը աշխատանքում դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգում, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքում դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հնարավորությունները Հայաստանում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-016
Մոդուլի նպատակը	Ուսանողներին մատչելի դարձնել ապահովագրության օրենսդրական դաշտը, այդ թվում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենքը», Քաղաքացիական օրենսգրքի «54. Ապահովագրություն» գլուխը, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը և ՀՀ կենտրոնական բանկի դերը ապահովագրական շուկայի կարգավորման գործընթացում:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ԱՊԳ-5-11-006
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	«Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Ապահովագրական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ՀՀ-ում իրականացվող ապահովագրության ձևերը և տեսակները, բնութագրում ապահովագրության բոլոր դասերը, բ. ճիշտ է սահմանում ՀՀ-ում ապահովագրական ընկերությունների կազմակերպաիրավական ձևերը, գ. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերության հետ փոխկապակցվածության և նշանակալից մասնակցության գաղափարները, դ. ճիշտ է սահմանում ապահովագրական ընկերությունների կառավարման մարմինները, ղեկավարները և նրանց իրավասությունները, ե. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների լիցենզավորման, գրանցման փուլերը և գործընթացները, զ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի գրանցման գործընթացը և անհրաժեշտ փաստաթղթերը, է. ճիշտ է նկարագրում ապահովագրական ընկերությունների գործառույթների պատվիրակման գործընթացը, ը. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների կողմից անհրաժեշտ տեղեկատվության հրապարակման գործընթացը, թ. ճիշտ է սահմանում ապահովագրական միջնորդության գաղափարը, սահմանում ապահովագրական գործակալների

	և ապահովագրական բրոքերների գործունեությունը, ժ. ճիշտ է նկարագրում ապահովագրական պորտֆելի փոխանցման գործընթացը, ի. ճիշտ է նկարագրում ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման, սնանկության և լուծարման գործընթացները, լ. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների վերահսկողության գործիքները, խ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական գաղտնիքի հրապարակումից բխող հետևանքները:
Ուսումնառության արդյունք 2	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիմնադրույթների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ապահովագրության հիմնական տարրերը՝ ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու, ապահովագրության օբյեկտ, ապահովագրավճար, հատուցում, ապահովագրական գումար, բ. ճիշտ է նկարագրում ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերը, վկայագիրը և դրանց պարտադիր պայմանները, գ. ճիշտ է բնութագրում ապահովագրական պայմանագրի կնքման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման սկզբունքները, ե. ճիշտ է ներկայացնում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական ընկերությանը տեղեկատվության տրամադրման կարգը, զ. ճիշտ է սահմանում համաապահովագրության էությունը:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը: ՀՀ կենտրոնական բանկը՝ որպես ապահովագրական շուկայի վերահսկող մարմին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ապահովագրական ընկերությունների լիցենզավորման և գրանցման գործընթացը, լիցենզավորման և գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, բ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների նկատմամբ սահմանվող տեխնիկական և տարածքային պահանջները, գ. ճիշտ է նկարագրում ապահովագրական ընկերության ղեկավարների լիցենզավորումը, դ. ճիշտ է սահմանում ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց նշանակությունը, իրականացնում պարզ հաշվարկ, ե. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստները և դրանց նպատակը, զ. ճիշտ է ներկայացնում ապահովագրական ընկերությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց տարրերը և նշանակությունը, է. ճիշտ է բնութագրում ապահովագրական պորտֆելի փոխանցման դեպքերը, ը. ճիշտ է նկարագրում ապահովագրական ընկերությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ տեղեկատվության ներկայացման բովանդակությունը և կարգը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-017

Մոդուլի նպատակը	Ուսանողներին ներկայացնել անշարժ և շարժական գույքի գնահատման, պատճառված վնասի գնահատման գործունեության ընդհանուր նկարագիրը, դրա զարգացման հիմնական միտումներն ու առանձնահատկությունները, ներկայացնել գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև գնահատման սուբյեկտների իրավահարաբերությունները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԵՐԸ» ԱՊԳ-5-11-007
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Անշարժ գույքի գնահատման գործունեության ընդհանուր նկարագրի իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում գնահատման օրենքը, բ. ճիշտ է ներկայացնում գնահատման ստանդարտի հիմնական դրույթները, գ. ճիշտ է ներկայացնում լիցենզավորման մասին օրենքի հիմնական դրույթները:
Ուսումնառության արդյունք 2	Անշարժ գույքի գնահատման հիմնական հասկացությունների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում անշարժ գույքի գնահատման գործունեության սուբյեկտներին, բ. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի գնահատման օբյեկտները, գ. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի գնահատման պարտադիր դեպքերը, դ. ճիշտ է իրականացնում ապահովագրական շուկայի ուսումնասիրություն, տարբեր ապահովագրական ընկերությունների կողմից իրականացվող գործառնությունների և մատուցվող ծառայությունների վերլուծություն:
Ուսումնառության արդյունք 3	Անշարժ գույքի գնահատման գործունեության կազմակերպման և իրականացման իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պայմանագրի պարտադիր պայմանները, բ. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի գնահատման հաշվետվության վերաբերյալ պարտադիր պահանջները, գ. ճիշտ է բնութագրում պատվիրատուների իրավունքներն ու պարտականությունները, դ. ճիշտ է բնութագրում անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացող անձանց իրավունքներն ու պարտականությունները
Ուսումնառության արդյունք 4	Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման մեթոդների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման ծախսային մեթոդը, բ. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման համեմատական մեթոդը, գ. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման եկամտային մեթոդը:
ՈՒսումնառության արդյունք 5	Տրանսպորտային միջոցների գնահատման աշխատանքների ընթացակարգի իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցների գնահատման գործունեության կազմակերպումը և իրականացումը, բ. ճիշտ է բնութագրում տրանսպորտային միջոցների գնահատման ժամանակ կիրառվող հիմնական սկզբունքները և մեթոդները:
Ուսումնառության արդյունք 6	Տրանսպորտային միջոցների պատահարի արդյունքում վնասի գնահատման հասկացության իմացություն

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գնահատման գործունեության սուբյեկտները և օբյեկտները, բ. ճիշտ է ներկայացնում գնահատման իրավական ակտերը և կանոնակարգերը, գ. ճիշտ է ներկայացնում գնահատման հիմնական հասկացությունները:
Ուսումնառության արդյունք 7	Տրանսպորտային միջոցների պատահարի արդյունքում վնասի գնահատման արդյունքների ամփոփման և հաշվետվության կազմման իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գնահատման մեթոդները և սկզբունքները, բ. ճիշտ է բնութագրում գնահատման հաշվետվության պարտադիր պահանջները, գ. ճիշտ է ներկայացնում գնահատման հաշվետվության որակի նվազագույն չափանիշները:
Ուսումնառության արդյունք 8	Վերագնահատման և կրկնակի գնահատման, վարքագծի կանոնների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի վերագնահատման և կրկնակի գնահատման դեպքերը, տարբերությունները, բ. ճիշտ է ներկայացնում գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրության և եզրակացությունների կազմման կարգը, շեղումները գ. ճիշտ է ներկայացնում գնահատողի վարվելակերպին ներկայացվող պահանջները և ակնկալվող վարքագիծը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-018
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել բանկային գործի ստեղծման հիմնապատճառներին, բանկերի էությանը և գործառնություններին, բանկային համակարգին, բանկերի տեսակներին, կազմակերպաիրավական կառուցվածքին, բանկային ռիսկերին, գործունեության և կարգավորման հիմունքներին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԱՊԳ-5-11-003, «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԱՊԳ-5-11-004
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բանկերի ծագման, էության և գործառույթների իմացություն : Բանկային համակարգը և նրա ձևավորումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանկային գործի ծագման հիմնապատճառները և հետագա զարգացումը, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը, բ. ճիշտ է բնութագրում բանկերի էությունը և ներկայացնել բանկի տնտեսական բովանդակությունը, գ. ճիշտ է ներկայացնում բանկերի դերը տնտեսության զարգացման գործում, դ. ճիշտ է բնութագրում բանկերի առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում բանկի գործառույթները և գործառնությունները, զ. ճիշտ է ներկայացնում բանկային համակարգը մի շարք զարգացած երկրներում և Հայաստանի Հանրապետությունում:
Ուսումնառության արդյունք 2	Բանկերի դասակարգում ըստ տարբեր հատկանիշների և բանկերի տեսակների բնութագրում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանկերի դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների,

	բ. ճիշտ է բնութագրում բանկերի տարբեր տեսակները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բանկերի կազմակերպաիրավական կառուցվածքը և կառավարման մարմինները: Բնութագրել բանկերի կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործառույթները և կառավարման մարմինների իրավասությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանկերի կազմակերպաիրավական կառուցվածքները և նրա ստորաբաժանումները, բ. ճիշտ է ներկայացնում բանկերի կառավարման մարմինները և նրանց հիմնական իրավասությունները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել բանկերի ֆինանսական միջոցները և առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում առևտրային բանկերի միջոցների գոյացման աղբյուրները և դրանց կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում բանկերի կապիտալի հիմնական գործառույթները, գ. ճիշտ է բացատրում և բնութագրել բանկերի ակտիվների կառուցվածքը և որակը, դ. ճիշտ է ներկայացնում ակտիվների դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների:
Ուսումնառության արդյունք 5	Բանկերի կառավարման հիմունքների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում բանկի գործունեության հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում բանկերի ռեսուրսների կառավարման մի շարք մեթոդներ, գ. ճիշտ է բացատրում բանկերի վճարունակությունը, իրացվելիությունը և դրանց վրա ազդող գործոնները, դ. ճիշտ է բացատրում բանկերի աղբյուրները, ծախսերի տարրերը և շահութաբերությունը:
Ուսումնառության արդյունք 6	Բանկերի գործունեության կարգավորման հիմունքների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանկերի գործունեության կարգավորման նախադրյալները, բ. ճիշտ է ներկայացնում բանկերի գործունեության լիցենզավորման գործընթացը, գ. ճիշտ բացատրում բանկերի գործունեության կարգավորումը, մասնավորապես՝ տնտեսական նորմատիվների համակարգը, դ. ճիշտ է ներկայացնում բանկերի գործունեության վերահսկման գործընթացը:
Ուսումնառության արդյունք 7	Բանկերի ռիսկերի, տեսակների, գնահատման եղանակների և կառավարման մեթոդների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում ռիսկ հասկացությունը, բ. ճիշտ է ներկայացնում ռիսկերի հիմնական տեսակները, գ. ճիշտ է բացատրում ռիսկերի գնահատման եղանակները, դ. ճիշտ է ներկայացնում ռիսկերի կառավարման քաղաքականությունը:
Ուսումնառության արդյունք 8	Բանկերի գործունեության գնահատման և բանկային համակարգի զարգացման միտումների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ տարածքում գործող բանկերի ամփոփ պատկերը, բ. ճիշտ է բացատրում ՀՀ բանկերի համակարգի կապիտալի վրա ազդող գործոնները, գ. ճիշտ է բացատրում ՀՀ բանկերի համակարգի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը, դ. ճիշտ է բացատրում ՀՀ բանկերի համակարգի շահութաբերությունը, իրացվելիությունը, ե. ճիշտ է ներկայացնում մրցակցությունը և համագործակցությունը ՀՀ բանկային համակարգում,

	գ. ճիշտ է մեկնաբանում բանկերի գնահատման չափանիշները տարբեր համակարգերով:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-019
Մոդուլի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել բանկային հաշիվներին, հաշիվների բացման ընթացակարգերին, բանկային հաշիվներով իրականացվող գործընթացներին և բանկային հաշիվների բացումն ու վարումն ապահովող օրենսդրական դաշտին, բանկերում դրամարկղային գործառնությունների իրականացման գործընթացներին, վերջիններիս իրականացման սխեմաներին, դրամարկղային գործառնությունների և ներբանկային գործարքների իրականացման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	«ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ԱՊԳ-5-11-018
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բանկային հաշիվների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանկային հաշվի հասկացությունը, կիրառման անհրաժեշտությունը, բ. ճիշտ է ներկայացնում բանկային հաշվի պայմանագրի կնքման գործընթացը, բանկի և հաճախորդների իրավունքները և պարտականությունները բանկային հաշիվների սպասարկման տեսանկյունից:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել թղթակցային հաշիվները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում թղթակցային հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը, թղթակցային հաշիվների տեսակները, բ. ճիշտ է ներկայացնում թղթակցային հաշիվների բացման գործընթացի նկարագրությունը, գ. ճիշտ է ներկայացնում հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել դրամարկղային գործառնությունները
Կատարման չափանիշներ	ա. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունների իմացություն, բ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության դրամի վճարունակության հատկանիշները, բանկերում Հայաստանի Հանրապետության դրամանիշերի փոխանակումը, Կենտրոնական բանկում դրամանիշերը փորձաքննության ընդունելը և փոխանակելը, գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը, բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների վերականգնման կանոնակարգումը, բանկային հաշիվներից կանխիկ դրամի դուրսգրումը, բանկերում կանխիկ դրամի ինկասացիան:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել բանկերում դրամարկղային գործառնությունների իրականացումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դրամական միջոցների ընդունման, տրամադրման գործընթացները, դրամարկղային

	գործառնությունների և ներբանկային գործարքների իրականացման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը և դրանց ներկայացվող պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում գանձապահներին տրամադրվող սահմանաչափերը, դրամապահոցից դրամական միջոցների մուտքերը և ելքերը, ինչպես նաև «մեկ պատուհանի սկզբունքը»:
Ուսումնառության արդյունք 5	Բնութագրել «բանկ-հաճախորդ» էլեկտրոնային վճարումների համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «բանկ-հաճախորդ» էլեկտրոնային վճարումների համակարգը, վերջինիս կիրառման անհրաժեշտությունը և արդյունավետությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-020
Մոդուլի նպատակը	Տրամադրել ուսանողներին բավարար գիտելիք արտարժութային գործառնություններ իրականացնելու, ինչպես նաև գործարքների ժամանակ տարբեր տեսակի ռիսկերից ապահովագրվելու համար, որի արդյունքում ուսանողները կտիրապետեն արտարժութային շուկայում գործարք իրականացնելու մեթոդներին, գործարքների կնքման քայլերին, գործարքների կնքման արդյունքում առաջացող արտարժութային ռիսկերի բացահայտմանն ու դրանց կառավարմանը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ԱՊԳ-5-11-018
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնութագրել արտարժութային գործառնություններն ու փոխարժեքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արժույթի և փոխարժեքի հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում փոխարժեքի ձևավորումը, մեկնաբանում արժեզրկման պատճառները և գիտի դրանց չափման ձևերը, գ. ճիշտ է դասակարգում արժույթները և համեմատում դրանք:
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել արժութային շուկայի կառուցվածքը և մասնակիցներին
Կատարման չափանիշներ	ա. գիտի շուկայի նշանակությունը, դրա կառուցվածքը և դերը առօրյա կյանքում, բ. ճիշտ է ներկայացնում շուկայի մասնակիցներին և նրանց գործունեության առանձնահատկություններն ու տարբերությունները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել արժութային առևտրի հիմնադրույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «գին» հասկացությունը և ցույց տալիս դրա ձևավորման ընթացքը առաջարկի և պահանջարկի կորերի միջոցով, բ. Կրոս փոխարժեքի, առքի և վաճառքի գների ձևավորման մեխանիզմի իմացություն և հաշվարկներ կատարելու կարողություն գ. ճիշտ է ներկայացնում արբիտրաժ հասկացությունը, դերն ու նշանակությունը արժութային շուկայում:

Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել արժութային դիրքը, գործառնությունների հաշվեգրման մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում «արժութային դիրք» հասկացությունը, նրա ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում արժութային ռիսկը, նրա առաջացման պատճառների և ռիսկերը զսպելու գործիքները: գ. ճիշտ է ներկայացնում Սփոթ ու Ֆորվարդ գործառնությունները և հաշվանցման առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 5	Բնութագրել արտարժութային ածանցյալները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում Ֆորվարդային գործածությունները՝ որպես արժութային ռիսկից ապահովագրում, բ. գիտի Ֆորվարդային գործածությունների ձևերը և դրանց առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում Ֆորվարդը՝ որպես ռիսկից ապահովագրում և շահույթ ստանալու մեթոդ:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել արժութային շուկայի վերլուծության մեթոդները և Ֆունդամենտալ վերլուծության հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շուկայի վերլուծության ձևերը և յուրաքանչյուրի առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում ֆունդամենտալ վերլուծության հիմունքները, պատկերացնում է փոխարժեքի վրա ազդող յուրաքանչյուր գործոնի ազդեցության ուղղությունը:
Ուսումնառության արդյունք 7	Բնութագրել տեխնիկական վերլուծության հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում , թե ինչպես է գների դինամիկայի վերլուծությունը օգնում կանխորոշել փոխարժեքը, բ. ճիշտ է ներկայացնում փոխարժեքի դինամիկան պատկերող հանրահայտ Ճապոնական մոմիկների կիրառությունը և հասկանում դրանցով ստացվող գրաֆիկի մեկնաբանությունները: Ճապոնական մոմիկների միջոցով ճիշտ է կանխորոշում փոխարժեքը, գ. ճիշտ է ներկայացնում գների դինամիկան և փոփոխման միտումները տրենդների միջոցով, որոնց օգնությամբ հնարավոր է պարզել գնի ուղղության փոփոխման միտումները, դ. ճիշտ է ներկայացնում հոգեբանական և վիճակագրական վերլուծությունների կարևորությունը արտարժութային շուկաներում գործարքների կնքման ժամանակ:
Ուսումնառության արդյունք 10	Արժութային առևտրի կազմակերպման ներածական իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտարժութային գործարքների կնքման ժամանակ իրականացվող քայլերը, բ. ճիշտ է ներկայացնում պայմանագրային ռիսկերի բացահայտումը և դրանց կառավարումը, գ. ճիշտ է ներկայացնում արտարժութային շուկայում գործելու նորմերի և վարքագծի կանոնակարգերը:
Ուսումնառության արդյունք 11	Ներկայացնել արժութային քաղաքականությունը և ռեժիմները, ՀՀ արժութային շուկան
Կատարման չափանիշներ	ա. արժութային ռեժիմների պատմական զարգացումը, բ. ճիշտ է ներկայացնում արժութային ռեժիմների տեսակները և դրանց համեմատական առավելությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԳ-5-11-021
Մոդուլի նպատակը	Ուսանողներին տրամադրել արժեթղթերով իրականացվող գործառնությունների վերաբերյալ գիտելիքներ, որը հնարավորություն կտա ուսանողներին համապատասխան մասնագիտական գործունեություն իրականացնել՝

	պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային պրակտիկայում կիրառվող մոտեցումները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	«ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ԱՊԳ-5-11-018
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնութագրել արժեթղթերի շուկան, արժեթղթերի շուկայի գործառույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում արժեթղթերի շուկայի հասկացությունը, բ. ճիշտ է բնորոշում արժեթղթերի շուկայի գործառույթները, գ. ճիշտ է սահմանում արժեթղթերի շուկայի բաղկացուցիչները, դ. ճիշտ է բնորոշում արժեթղթերի շուկայի հիմնական մասնակիցներին:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել արժեթղթի ծագման տնտեսագիտական և իրավական հիմունքները, արժեթղթերի դասակարգումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում արժեթուղթ հասկացությունը, բ. ճիշտ է սահմանում փաստաթղթային, ոչ փաստաթղթային, անվանական, ըստ ներկայացնողի և օրդերային արժեթղթերը, գ. ճիշտ է բնութագրում հիմնական, առաջնային և ածանցյալ արժեթղթերը, արժեթղթերի ժամկետային, տարածական և շուկայական առանձնահատկությունները, դ. ճիշտ է բնորոշում արժեթղթերի տեսակներն ըստ տնտեսական էության:
Ուսումնառության արդյունք 3	Բնութագրել բաժնային արժեթղթերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում «բաժնետոմս» հասկացությունը, բաժնետոմսերի հատկությունները, բաժնետոմս թողարկողի հետաքրքրությունը, բաժնետոմսում ներդրողի հետաքրքրությունը, «հասարակ» և «արտոնյալ» բաժնետոմսեր, բ. ճիշտ է իրականացնում բաժնետոմսերի միաձուլումը և տրոհումը, գ. ճիշտ է իրականացնում կորպորատիվ գործառնություններ հաստատագրված և փոփոխական շահաբաժնով, կուտակման, փոխարկելի և վերադարձելի արտբաժնետոմսերով, ինչպես նաև աշխատակցի, տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերով, դ. ճիշտ է հաշվարկում և ձևակերպում շահութաբաժինները, ե. ճիշտ է բնորոշում բաժնետոմսերի անվանական, էմիսիոն, շուկայական արժեքների, ինչպես նաև արժեքային այլ ցուցանիշների ձևավորման հիմունքները:
Ուսումնառության արդյունք 4	Բնութագրել պարտքային արժեթղթերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում «պարտատոմս» հասկացությունը և տարբերակում պարտատոմսերն ըստ դասակարգման, բ. գիտի պարտատոմսերի արժեքային գնահատումը, գ. ճիշտ է հաշվարկում պարտատոմսերի եկամտաբերությունը,

	դ. ճիշտ է բնորոշում Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի շուկայի գործունեության իրավական, տնտեսագիտական և կազմակերպչական հիմունքները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել օրդերային արժեթղթերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում «օրդերային արժեթուղթ» և «մուրհակ» հասկացությունները, ինչպես նաև մուրհակների շրջանառության տնտեսագիտական նշանակությունը, բ. գիտի մուրհակներով գործառնությունները, գ. գիտի մուրհակային հարաբերություններում ընդգրկված անձանց իրավունքները և պարտավորությունները:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել այլ արժեթղթերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում այլ պարտքային, վճարային և տիտղոսային արժեթղթերը, բ. ճիշտ է բնորոշում Հայաստանի Հանրապետությունում և միջազգային առևտրային շուկաներում կիրառվող այլ արժեթղթերի ճանաչման առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 7	Բնութագրել ժամկետային գործիքների շուկան (դերիվատիվների շուկա)
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում «ժամկետային շուկա» հասկացությունը, բ. ճիշտ է բնորոշում ժամկետային շուկայի գործառույթները, գ. գիտի ժամկետային շուկայի բաղկացուցիչները, դ. ճիշտ է բնորոշում ժամկետային շուկայի հիմնական մասնակիցներին:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել ածանցյալ արժեթղթերը (դերիվատիվներ)
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում «ածանցյալ արժեթղթեր» (դերիվատիվներ) հասկացությունը և դասակարգում ածանցյալ արժեթղթերը, բ. կարողանում է իրականացնել գործառնություններ ֆորվարդային պայմանագրերով, գ. կարողանում է իրականացնել գործառնություններ ֆյուչերսներով, դ. կարողանում է իրականացնել գործառնություններ օպցիոններով:
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներին և ենթակառուցվածքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում անդերրայթինգի հասկացությունը, փուլերը և տեսակները, բ. ճիշտ է բնութագրում արժեթղթերի շուկայում բանկերի գործունեության առանձնահատկությունները, գ. ճիշտ է բնորոշում ֆոնդային բորսայի, արտաբորսայական կազմակերպված շուկաների և դեպոզիտարիայի գործառույթները:

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 0606 «Ապահովագրական գործ» մասնագիտության «Ապահովագրական գործի մասնագետ» մասնագիտացման օրինակելի ուսումնական պլան

Հ/հ	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	I
2.	Ռուսաց լեզու		108	72	I
3.	Օտար լեզու		108	72	I
4.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		81	54	I
5.	Իրավունքի հիմունքներ		54	36	I
6.	Պատմություն		81	54	I
7.	Ֆիզիկական կուլտուրա		114	114	I, 2
8.	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	I
9.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	I
	ԸՆԴԱՄԵՆԸ		**735**	**528**	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1.	Հաղորդակցություն		81	54	I
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		27	18	I
3.	Համակարգչային օպերատորություն		108	72	I
	ԸՆԴԱՄԵՆԸ		**216**	**144**	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Գործարար հաղորդակցություն		108	72	I
2.	Տնտեսագիտության տեսություն		135	90	I
3.	Ֆինանսներ		81	54	1
4.	Ֆինանսային մաթեմատիկա		135	90	I, 2
5.	Վիճակագրություն		54	36	2
6.	Հաշվապահական հաշվառում		135	90	I
7.	ՀՀ հարկային օրենսդրություն		81	54	2
8.	Ապահովագրական մարքեթինգ		54	36	I
9.	Մաթեմատիկական հաշվարկներ		54	36	I
10.	Գործարար անգլերեն		108	72	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**945**	**630**	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Ապահովագրական գործ		135	90	1
2.	Ապահովագրության տեսակները և դասերը		81	54	1
3.	Պարտադիր ապահովագրություն		81	54	2
4.	Ապահովագրական օրենսդրություն և շուկայի կարգավորում		108	72	2
5.	Հաշվապահական հաշվառումը ապահովագրական ընկերություններում		81	54	2
6.	Գույքի գնահատում		81	54	2
7.	Ֆինանսական հաշվարկներ EXCEL ԿԾՓ-ի միջավայրում		81	54	2
8.	Բանկային գործ		81	54	2
9.	Բանկային հաշիվներ և դրամարկղային գործառնություններ		54	36	2
10.	Արտարժութային գործառնություններ		81	54	2
11.	Արժեթղթերով գործառնություններ		81	54	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**945**	**630**	
	ԸՆՏՐՈՎԻ		**81**	**54**	2
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		**99**	**66**	

	ԸՆԴԱՄԵՆԸ	57	3021	2052	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ		200	200	
	ՊՐԱԿՏԻԿԱ	15	540	540	
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	8			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	3			
	ԸՆԴԱՄԵՆԸ	83			